

Gibelet-ի հետ . իսկ ինքը պարտութեանը ժամանակ առաջին ամուսնու-  
թիւնը կնքեց անտիոքացի իշխանուհի Զապուունի հետ , 1189 թուին . բայց  
ետքէն ասոր հետ ապահարզան ընկելով՝ Կիպրոսի թագաւոր Ամորի Լուսին-  
եանին ազջիւր Սիպիւրն առաւ , 1210 թուին (1) : Այս երկրորդ ամուսնու-  
թիւնէն ծնաւ Զապէլը , որ հօրը մեանելէն ետքը թագաւորական գահը ժա-  
ռանդեց , եւ շատ երիտասարդ հասակի մէջ ամուսնացաւ Անտիոքի իշխա-  
նազուն Ֆիլիպի հետ , որ Հայոց թագաւորական գահը բարձրացաւ (1222  
—1225) , խոստանալով իրենց կրօնական եւ ազգային ծէսերը յարգել եւ  
պահպանել . բայց քիչ ժամանակէն Ֆիլիպ դրժելով իր խոստումները , —  
մանաւանդ թէ երկիրը կողոպտելով իր հօրենական գանձը հարստացնելու  
ետեւէ ինկած էր , — հայ իշխաններու եւ պալատականներու հաւանու-  
թեամբ՝ զիչեր ժամանակ Զապէլի ծոցէն դուրս հանուեցաւ բռնի կերպով,  
հակառակ Զապէլի արտասուախառն ազազակներուն ու կոծերուն , եւ  
առաջնորդուեցաւ բանտ (2) : Բանտի մէջ թունաւորեցին Ֆիլիպը . իսկ Զա-  
պէլը կարգեցին այս անգամ հայ իշխանի մը՝ Հեթումի հետ , որ Կոստան-  
դին պայլի որդին էր :

Հեթում Ա. Զապէլի հետ միացած՝ իր ճարտիկութեամբ ու քաղա-

էր բայց տարի մը հազիւ իշխեց իր հօրբուրդի թովմաս պայլի խնամակալութեամբ , ինչպէս  
կը վկայէ Մմբաս Գունդասալլ . — « Ոժէ (= 1168). Մեռաւ պարոն Թորոս որդին Լեոնի՛  
տէրն Մասիայ , որոյ ղորմեցի Քրիստոս : Իսկ ի մեռանէն՝ եղ պարոն Թորոս պայլ աղա-  
յին իւրոյ որ կոչէրն Ռուբէն՝ զիշխանն պարոն Թումաս , որ կալաւ զաշխարհն պարոն  
Թորոսին տարի մի : »

(1) «ՈՅԹ (= 1210). Գնաց Լեւոն քազաւորն ի Կիպրոս , եւ առ իւր  
կին զԿիպրոսայ քազաւորին Բորն զՍպիլն , կին իմասունն եւ համեաս :»  
Մմբաս :

(2) Ինչպէս կը նկարագրէ Աբուլֆարաջ ասորի պատմագիրն իր *Աստ-  
րիկներու ժամանակագրութեան* մեջ , սպ. Լայպցիգ 1789, եր. 485—486 :  
Իսկ հայ պատմիչներէն Մմբաս այսպէս կը գրէ . Հայերը «բերին ի պալման  
որ (Ֆիլիպ) հայեանակ կենայր , ու զեկեղեցին եւ զսեղանն հայեանակ սաներ,  
եւ զամեն մարդ յիւր իրաւունն պահեր : Երբ մեծացաւ եւ եղիւ փան սար-  
ւոյ , նա իր հօրն քեպիրով կ'ուզէր՝ որ ձգէր զՀայոց զամեն իշխանն , եւ  
յիւրոցն դներ , այնչափ որ չկարացին ժուժել իւրեան . բունեցին զինն ի Թիլն  
եւ յարոտոյն ձգեցին , եւ արարին բերդարգել՝ ուր մեռաւ . եւ այլ պալլ  
դին զպարոն Կոստանդին :» *Մմբաս , ՈՀԱ :*